



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 24 » *փետրվարի* 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 57-Ա

«ՊԵԳԱՍՈՒՍ ԷՅՐԼԱՅՆՁ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա և 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանները և «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերության 2023 թվականի փետրվարի 8-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Պեգասուս Էյրլայնզ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով՝ 2023 թվականի մարտի 26-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ, Անթալիա/LTAI/-Երևան/UDYZ/- Անթալիա/LTAI/ երթուղով՝ 2023 թվականի մարտի 26-ից մինչև 2023 թվականի

հոկտեմբերի 27-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 10-ի N 3-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ամառային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի մարտի 26-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 20-ի N 19-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թիվ 284/200223 թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

4. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ


Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 284/200223
ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ
ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 284/200223
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Պատվիրատուն Charterer	«Պեգասուս Էյրլայնզ» “Pegasus Airlines”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320, A321, B737
Հաճախականությունը Frequency	շաբաթական 3 չվերթ 3 flights per week
Երթուղին Air route	Ստամբուլ/LTFJ/-Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFJ/ Istanbul/LTFJ/-Yerevan/UDYZ/-Istanbul/LTFJ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	26/03/2023 մինչև 28/10/2023 26/03/2023 till 28/10/2023

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION
COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

24.02.2023

(տալու ամսաթիվը)
(date of issue)